Արձանագրություն N 5
«ՏՇԻԳ-ԲԸԾՁԲ-2016/3Տ<» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» հուլիսի 2016թ.
ժամը 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաքյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գասպարյան

I. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու և մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին
(Ք. Քաբաքյան)

1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի 30.06.2016թ. նիստի արձանագրության թիվ 4 որոշումը, հանձնաժողովը որոշեց.

ա) սույն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած նիստին ներկա մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ,

բ) հրավերի պահանջների համաձայն մասնակիցների առաջարկված գների նվազեցման հնարավորության վերաբերյալ բանակցությունների համար սահմանել 5 րոպե ժամանակահատված,

գ) բանակցությունների համար սահմանված 5 րոպե ժամանակահատվածում մասնակիցների կողմից վերանայված և նվազեցված գները ներկայացվում են ստորև աղյուսակում.

| Հ/Հ | Մասնակից-ների անվանումները | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գինը | | | Վերանայված և նվազեցված գինը | | | Մասնակցի զբաղեցրած տեղը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ դրամ | | | | | | |
| | | Գինն առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ | Ընդհանուր | Գինն առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ | Ընդհանուր | |
| Չափաբաժին 1 | | | | | | | | |
| 1 | «Սահմանաչեն» ՍՊԸ* | 1 730 000 | 346 000 | 2 076 000 | --- | --- | --- | II տեղ |
| 2 | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | 1 730 000 | 346 000 | 2 076 000 | 1 710 000 | 342000 | 2 052 000 | I տեղ |
| 3 | «Քարազարթ» ՍՊԸ* | 3 806 000 | ------ | 3 806 000 | --- | --- | --- | |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- սույն ընթացակարգի 8-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել.

- սույն կետում նշված չափաբաժնի համար հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը,

- առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ «Քարազարթ» ՍՊԸ-ին առաջարկել նաև ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, քանի որ 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ,

- փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ________________ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ ________________ Կ. Գասպարյան

________________ Ա. Պապյան

Քարտուղար՝ ________________ Մ. Գասպարյան